ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 77

ք. Երևան 17.08.2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Ուլտրամանուշակագույն լամպերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/25» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԳՐԻՄՈ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից):

11.07.2023թ.-ին կայացած նիստում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում արձանագրել է անհամապատասխանություններ և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը՝ առաջարկելով վերջինիս մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

18.07.2023թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Մասնակցի կողմից չեն 11.07.2023թ.-ին ծանուցմամբ արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են մասամբ /առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում Հավելված 1.1-ում, արձանագրված անհամապատասխանությունը չի շտկվել/, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջը՝ որոշել է Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին անբավարար և մերժել վերջինիս հայտը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը՝ որոշում եմ «ԳՐԻՄՈ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ